ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՋԵՌԱԳՐԵՐԸ.

(Շարունակութիւն)

Թ. 24.

Ճառքնտիր (թղթ. բոլորդ. թուկ. գրչ. ՊԼԸ. սկզբից և վերջից թերթերն ընկած).

1ա (ուշ ժամանակի գրուածք). «Ի՞նչ է ա՞զմի։ առվայուրին։ մխիթարին։ զաւակացն խուզադին։ Կազ՚ցին։ Իւր։ թարգման խոսնունին։ զաւակացն։ աջի քէզին։ շաֆուութ։ ամէն։

4ա Ի՞նչ է բարեխաւսութի՞ւն սրբոյն պետրոսի հոգբարեսին և արիսոդոմաց սարկաւագին, ոդորմեա ա՞մ հաւատացելոց քոց. եւ առաւել սուրիանոս միայնակեցի և ծնաւղացն, և եղբարցն և քեռցն. և ա՞մ ոդորմանացն. և ինձ մեղաւոր գրոզիս ոդորմեա՛ ա՞ր։ և քեզ փառք յաւիտեան։ ամէն։

4ա Ասաուած ոդորմի թագոս կ՚ընին, և եղբարն կարապետ ք՞նին, և ծնոզաց նոցա. յոհանէս ք՞հին, և խուրթլու մելիքին և մեզաւոր գրիս ամէն։

8բ Ս՞ր ա՞ ծաձնին բարէխաւսութեամբ ոդորմեայ, զաւչին, և կ՚նկցն իւր թուրմանդին. և որդացն. գ՞ին. էմատին. կուսանդին. բարքաջանին. և հանիսին. և հարանեարացն. խաթունին, հաւսին. և իւրե՞նց որդացն. և դստեր՞ց և ա՞մ ոդորմանացն. կ՚ողջոյց և լուսոյ ց և որ գայս ասէ ամէն։

14բ Յիշեա՛ ք ս ա՞ ծ ոդորմութե՞ք քով զատացդ ս՞ր գրոցս զաբրահիանոս միայնակեաց. և զծնաւղքն իւր զմկրտիչ և զիսուանդ. և զքոյրքն զաւդու և զշաքար, և զա՞մ ոդորմանքն։ ընդ նոսին և զիս զանցիշելի գրիչս զկարապետ քհ. և զմեր ծնաւղսն. և քեզ փառք յաւիտ։

14բ Ի՞նչ է ա՞ ծ ՚ազմի։ առվայուրին։ մխիթարին և զաւակացն։ խուզադին։ կոզակցին։ իւ՞ր թարգման խոսնունին։ զաւակացն։ աջի քէզին։ և կոզակցին։ իւր։ թուրմանդին։ ամէն։

18բ . . . . եւ առաւել թողութիւն մեզաց շնորհեացէ ք՞ս ա՞ ծ թագէոս կ՚ընին, և եղբարբ ն՞ր կարապետ ք՞հին՝ և ծնաղաց ն՞ց յոհանէս ք՞հին, և խուրթլու մելիքին. և արուա-

խաթունին, մարթային, սիրանոսին *), և որդոց ն՝ց. նեքամատին, մէլքէսէթին ամէն:

18բ Բ՝ս ա՝ ծ ողորմեա. զօշին. և կողայկիցն իւր. թուրվանդին, և որդոյն զարին և կ՝զկցն իւր. խաթունին, և որդոցն. ապովջանին. բաբաջանին մկրտչին. աւղուզխանին. և դատերն. խանբէկոն, և շ՝հրէկոն. և ա՝մ արեան մերձաւորաց. և ինձ անարժան ապարիսայ իրիցուս. կ՝ըդ՝ցդց և լսօղացդ. և որ զայս ասէ ամէն:

33բ Բ՝ս ա՝ ծ ի միւս անգամ գալըստեանն քո՝ ողորմեա՛ մեզ՝աւոր բարսեղիս: թվ Ռ՝ճԻ և մէկ մայիսի ամսոյն Ի՝ Բ.

34ա Բ՝ս ա՝ ծ ողմի. աջի բէգին: ալայդադին. հուրիբ. ի խուդադին: Մուրն ի՝ր թարգման խաթունին. գուլինարին:

45բ Բ՝ս ա՝ ծ ողորմի ազիզ բէկին այլուր՝ աջի բեկին. (վերջինս աւելի ճիշտ) և հաւրն նորա խուտատ և ամուսն թարգայ խաթունին ամէն:

55բ Բ՝ս ողորմի աջիբէգի հոգուն: իր ծընուդաց իւր: խուդատին: թարգան խաթունին: ա՝ ծ աջիբէգն կենդանպահ (?) է որ աջի բէգն էս գերա գնեց:

123ա Բարէխաւսութ՝ը յոհաննու: կամաւոր աղքատին. ողորմեայ ք՝ս ա՝ ծ, ողորմեայ, ըստացողի գրոցս. պապին. և ծնողաց, նորին. խաչատրին. և շահալամին. ամէն:

150բ Ես անարժան ծառայս ա՝յ. աւանէս մութա: գիրեցի. թէ ով որ կարդայ լի բերանով ողորմի ասացէք. Ա՝ ծ ձեր մեղ.՝՝ թողու: թ՝ վ: Զ: դա:

155բ Ես անարժան բարսեղ երեց գրեցի գիրս ով որ կարդա լի բերանով ա՝ ծ ողորմի ասի և ա՝ ծ: Ձեզ ողորմի իւր միւսանգամ գալըստեանն ամէն: ով ա՝ր յ՝ս օգնեա՛ թ՝վ Ռ՝ճԻ: հոգտեմբերի, ԺԸ:

168ա Ողջ՝ամի. ք՝ս ա՝ ծ ըստացողի գրոցս թաթոսին. ճանապիղին. որդոցն, և ընդանեացն ամէն:

185ա Ես մեղաւոր: դաբարի որթի հովանես գրեցի թ՝վն Ռ՝ճԿԱ. փետրվարի ՝ա. ով որ կարթա լիարերան ասէ ա՝ ծ ողորմէ ամէն:

297ա Ես գրեցի անարժան ծառայ ա՝յ միքէլ սարկաւաքս ի տեղացս ոհանայ վանիցս: ի թվայիանու . . . .

528բ Վասն գալոյ Լանկթամուրին բազում զաւրաւք և հ՝ծելովք. որ կոտորեաց զամենեսեան:

Արդ ով եղբարք և հաւատացեալք ք՝ի. լուարուք զպատուհաս բարկութ՝ան որ եկն եհաս ի վերայ մեր վ՝ան մեղաց

* 94ա Նաև «Սանասարին»

մեջոց։ Քանզի նեբէջ մարդասէրութ՝ը և ողորմութ՝ը. եռանդ-
նաշարժ սիրով երկայնմտութիւն սիրոյն ա՝յ. յորժամ էր
կամք մարդոյն արամադրեալ ի բարեբուն բարին. և կատա-
բաւոր գոլով կամաց արարչին։ Իսկ յորում ամենակիր ոչ հնա-
զանդեցան աւրինաց ստեղծաւորին իւրեանց։ Քարձեալ բա-
ղեղութ՝ն ա՝ ծ զմանամածելն բարձրութ՝ը ձեռինն առ ի հար-
կանել. և երթալով երթայր ընդ խոտորնակին. ուժգի՛ն խոտ-
որնակ։ Որպէս է տեսանել ի նախնոյն ազգամայ մինչև առ
յաղա։ . . . . . .
. . . . ։ Ոմանք երկրակարկամ պատառմամբ յանդուգնս
տառապեցան։ ոմանք այսպէս, և ոմանք այնպէս. սատակ-
կսկիծ դանիւ տանջեցան։ Որպէս եղև ի վերջացեալ աւուրս
և յերևիցացեալ ժամանակին. ի հայկազեան ազգիս թուոյս
տումարի. ՊԼԶ։ Եղեալ այր անուանի ըստ նմանութեան Գո-
ղիաթայ, Լանկիթամուբ անուն կոչեցեալ։ Գրեթէ սկաւառակ
եւթնեկի լցեալ գառնութեամբ բաժակաւ ի ձեռինն ա՝յ.
զոր եհեղ ի վերայ շարադրոյ ազգի մարդկայնոյ, ըստ նախ-
նոյն աստուծոյ, նաբուպատպասարայ, և այլոց վայրենաբարոյիցն։
Ուստի շարժեալ յելիցն արևու ի շահատանէն որոյ անուն
կոչի Սմբրգընդ։ և ձայն ահաբկու արկեալ ի վերայ բազում
դաւառաց զոր կային տէրութե՝ը այլոց։ և յոլովք արտաքոյ
յերկիւղէ և ի կարծեաց յոչ կամաց զեռեղեալ . . . . .
. . . . զաւրաց բազմութ՝ ի հարիւր հազար ուսերամ-
մերկաց։ երկաթակուռ զինուորաց։ սկսեալ ի յութհարիւր և
յերեսուն թուին խորհուրդ դաշտեանն։ և յետ վեց ամի
ապա եհաս առ մեզ շշուկն զոզացուցիչ։ զի յամսեանն մե-
հեկի ազգեաց մահն վազահասուկ ի բոլոր աշխարհս Հայաս-
տանեաց։ ահա անդ էր տեսանել զարբսուս ահագնահայե-
ցութ՝ե զողանաբարոյ մարդոց. զի լսողքն սրտաթափ լի-
նէին. և հանդիպողքն տեսանելով ի հեռաստանէ զփոշի ոտից
նոցա իբրև զամպ մեգախառն. զի արագէին երիվարք խստե-
բախ, և հիանային ազգ մարդկան յանսովոր պատահմանցն։ ե
թէ լինէր ուրուք դաղթեալ ի բարձրակատար գագաթս լե-
բանց, և անդուստ ի խոնարհ նայելով ի վերայ լեգէոնախումբ
կուտակեալ խռովութ՝ե ծովուն։ սոսկանայր հոգին ի մար-
մնին. որ թէպէտ կենդանի, այլ վատթար գոլով քան զբազ-
մաւրեա մեռեալս։ Ի փայլմանէ սուսերացն։ Ի ճաւճելոյ
ըռըմբացն։ ի գաբրելոյ երիվարացն։ ի փռընչելոյ կառացն։
ի խրխնջելոյ բարձրապարանոց ծովային ձիոցն. ի ճչելոյ ձայ-
նիցն. ի տեսութենէ անհուն հեծելոցն։ որ եռային զեռային։
զդաշտս ծածկէին. զլեռինս բոլորէին. զգաբս լնուին. զլայնա-

նիստ տեղիս փակէին. աշխարհալուր զձ՞այնս առնէին։ զերկիր աղջոյն առաղակաբկաջ և բռասրանեբկ խորանաւք ընուին։ և ութաւբեայ ճանապարհաց զապաւանդակ և զկայմն լարուցն մի առ մի հիւսեալ մանէին։ և եթէ ոք ընդդիմանայր նոցա անառիկ դղեկաւ. վաղվաղակի անդր ժամանէին խբրև զբազմութիւն մարախայ։ բոլորէին. ճչէին. գոչէին. ոռնային. բառաչէին. հաջէին. հառաչէին։ խխընջէին. որոտային։ զգբհաւլան գմդմէին. զնաղարայն հարկանէին. զչարխն լարէին. զնեռան տեղային։ . . . ռբմբաքարան հոլովէին. զբլգիհոնն ձգէին։ զմճնեղ մեքենայից . . . . . նէին և յերկնուստ . . . . . սէին։ քակէին. քանդէին. քարայատակէին. փոբէին. փոսհատանէին կռփէին. կռանէին։ զամաց հաղարաց շինուածս միաւբեա անհետ կոբուսանէին։ խակ նոքա որ ի նեբքս յամբոցին էին. տապէին. տագնապէին. թուլանային սարսէին. սարսափէին. ծարաւէին. նքթէին. նքողէին. երկիւղիւ երկնչէին։ Անդ էր տեսանել զլաց ծնաւղացն. զաղէտ զաւակացն. զգալարումն ազեացն. զայլայլումն դիմացն. զդեղնանալ երեսացն. զնաւազումն ձայնից։ զկապումն ոտից. զդադարումն ձեռացն. զհամբանալ լեզուացն. զխափանումն մտացն։ ումն աղեբսէր. ումն աղաղակէր։ ումն հայցէր. ումն պաղատէր. ումն խնդբէր. ումն աղաւթէր։ և ումն արտասուէր։ Եւ ոչ լսէր հեշտալուրն ա՞ծ վ՞ս մեղաց մերոց և անուղայ գնացից։ այլ մատնէր ի ձեռս անաւրինաց։ Խակ յորժամ բռնանային և առնուին զբերդ ուրուք. . . . . աղաղակ բառնային. և ի լեառն քաղաքի կամ բերդի հաւաքէին։ զառն առեալ առ ժամայն զզրուն երկաթիս խորտակէին յամենայն կողմանց ի վեր խաղային։ խբրև զծով վրվրագէզ կոխակուք զառհատարաքան ծածկէին։ Սեաղ ժամուն, ումն արիւնաթաթախ զիսագլոր թաւալէր ի մէջ արեան ծովուն։ Ումն կիսակուռ գլուխն ի յանձնէն. ջուր խնդրէր. և ի ծարաւոյ անդրէն մեռանէր։ Ումն անկեալ գլուխ ի վայր. և արեան աղբիւրն ի բերանոյն ելանէր։ Ո՜հ ձայնին. ո՜հ աւաղին։ Ո՜հ կսկծոյն արտասուագին։ Ջոկ առ ջոկ. բուլուկ բուլուկ. երամ երամ. ոկուզաւբէն անկեալ գնէին. մրցացի. աքացի և ծղացի։ Ա՛նդ վայ. ասա վայ՛ վայ։ անդ աւշ. ասա վա՜շ։ ահա անդորբացաւ ծով հեծելոցն. ահա ի խոյզ և ի խնդբելին. և խնդրէին հաբցանէին զբբիսառնեայսն. և յորժամ տեղեկանային. անողորմ սպանանէին։ . . . . . Թիւս հաղարաց։ զհրաշագործ եպիսկոպասունսն սրոյ բերանոյն ասային։ զսբբանեալ քահանայսն քարաջարդ զգլուխսն առնէին։ զբ՞ակ հաւատն կեբակուբ շանց արկանէին։ զտղայսն

առաթիւբ ձիոց առնէին։ զկանացն խայտառակէին. զմանուկսն նոցին գերի վարէին։ իբրև զկալ կամնաստլից զազոյն ձիովք կատէին. և փոխան ցերենոյ արիւնս գետոց բզխէին։ և փոխանակ յարգի զոսկերս իբրև զփոշի յերկիր հոսէին։ յաղեցան գազանք։ ձանձրացան թռչունք. տարակուսեցան գայլք թէ զո՞ւմ ուտէին միս։ զհայրապետաց. թէ զքահանայից. թէ զսարկաւագաց. թէ զպաշտաւնէից։ զճգնաւորաց թէ զլեռնականաց։ Դարձեալ ժամանէին յեկեղեցիս. տապալէին զսեղանս. այրէին զգրուանս. պոծէին զտաճարս. խորտակէին զտուփս խնկոց և հազարգաց։ ուրացուցանէին ի հաւատոյ և տպատապանանէին։ ի սով տատակութեան սովացուցանէին, մինչ զի զշուն. զկատու, զէշ, զձի, զհեղձուկ, զմուրտառ։ նաև զսիրտանուն զաւակն խորտէին և ուտէին։ բարձաւ զաւրութ՝ ի հացի և ջրոյ։ և արդ ճշմարիտ ասեմ ի ք՝ս՝ որ ի հազարէն և ի բիւրէն զմին մատնաւորեցի զ՝ս ձանձրութե՝ն լսողաց։ և այս ա՞մ եղև վ՝ս ծովացեալ մեղայ մեծաց։ ի յայսպիսի գառն և ազէատիճ ժամանակիս. ես նուաստս ի գրչաւորաց. կարարեալ ք՝հ. սկսայ զգիրքս զայս և կատարեցի։ Ո՞վ հանդիպիցէ այս ողբմելի պատմութե՝ս. զկս զմեղաւորս գրողս. և զտեսիանոս միայնակեացն յիշեցէք ի ք՝ս՝. և ա՝ծ զձեզ յիշէ. և նմա փառք յաւիտեանս. ամեն։

Փառք, եղակի, անճառելոյ. եռահիւսակ զաւանութե՝ն։ . . . . . (պատմում է համառօտակի մարդեղութեան մասին՝ սկսելի աշխարհի ստեղծագործութիւնից մինչև առաքեալների գործերն ու մահը)։ Իսկ յետ նոցա ելին ճգնազգեացք և հոգեացեալ ա՝ր հայրապետք։ և ուզղադաւան հաւատովք հաստատեցին զառաքելական եղեալ սահմանս. և գրեցին զա՝ ծանաւս և զս՝ր կանոնարանս. զնեբրոպեանս. և զպատմութի՝ս ա՝ր ճգնաւորացն, և զայլս ամենայն. ի յընթերցումն և յուրախութ՝ ի մանկանց եկեղեցոյ։ Զոր յայսմ ժամանակիս, ոչ բռնացեալ ունի զաշխարհս ազգն խամսիլեան. և նեղեն զազգս քրիստոնէից անիրաւութ՝ը և ա՛չ խրատամբք։

Սրդ. ի յայսմ գառն և ի սարսափս ժամանակիս. երևեալ խաբեբայ և սուտ միայնակեացն ստեփանոս. և ելեալ ի խնդիր այս ա՝ծայն անիրաւոպատելի ա՝ռունական գանձուցս։ . . . . . զս՝ր գիրքս զայս. ոչ . . . . . տաւնական. ի հալալ և ի քաղաւմ աշխատութե՝ փառատակոց իւրոց։ վասն զի կաց ի սմա չգրեալ տաւնք ա՝ռունական։

ընդ նմին և պատմութ՝ իք և վարք և չարչարանք սրբոյն առաքելոյն, և հոգեւոր հայրապետաց. և վեմական վարդապետաց. և բարեպաշտ ուղղափառ թագաւորաց. և աթի և քաջ զաւրավարացն. և սրբոց կուսանացն։ այլ և խրատք և վարդապետութ՝ իք զոր ընթեռնուն յաղուհացն և ա՝ծ տաւնախմբութ՝ իք զոր տաւնեն ընթանրական ուղղադաւան եկեղեցիք։ Վասն որոյ մեծ փափաքանաւք եմ գրել զսա ստեփանոս միայնակեացն. յիշատակ անջի՛ջ հոգոյ իւրոյ և ծնաւղացն մկրտչի և խուանդի. և քեռոյն ուսլուն մելէքի և շաքար խաթունի. և փեսային իւրոյ յովհաննիսի. և ամենայն ազգն մերձաւորացն կենդանեաց և հանգուցելոց։ Եւ եմ զսա նուէր և ընծայ ի զուռն ո՝ք եկեղեցեացն ամենափրկչին և տիրամաւրն . . . . . յա . . . . . գեաւղն գաւաշ։ որ հանապազ հրճուին սովաւ սրբատէր սպասաւորք տոցա ընտրեալ քահանայք. և անմոռաց յիշմամբ յիշեսցեն հանապազ ի ժամ աղաւթից. զյառաջ յիշեցեալքն զստեփանոս միայնակեացն և զծնաւղքն իւր և զքոյրքն և զաղգն ամենայն։ Եւ արդ եմ ամենամեղ և անարժան ծառայ ծառայիցն ա՝յ. կարապետ անարհեստ գրիչ, յանձն առի տիպս անձամբ և ծանրաբեռն մեղաւք. ոչ է զիտութ՝ իւ և անիմաստ մտաւք. անհմուտ գրոց զիտութ՝ իւ և անվարժ արուեստիւք. յանդգնութ՝ իւ ձեռնարկեցի ի մեծ գործս յայս։ ոչ ըստ իմում արժանաւորութեանս. այլ ապաւինելով յամենակարաւղ զաւրութիւն պարգևատուին. որ տայ առատապէս և ոչ նախատէ. քաղաւմ և մեծ աշխատանաւք հատուցի զսա յաւարտումն յա՝ ծանրակ կղզոջս աղթամարայ ընդ հովանեաւ ամենայաղթ ո՝ք խաչիս. և ո՝ք նշանիս։ Ի թուականս . . . . . ՊԼԸ։ Ի հայրապետ . . . . . ո՝ք զարքեպիսկոպոսն. վասն որոյ բարեխաւսութ՝ իւ ո՝ք և փառաւորեալ պ՝ ծածնին մարիամու. և աղաչանաւք ընտրելոց սրբոց և սրբոյն ստեփանոսի. ք՝ս ա՝ծ թագաւորն երկնաւոր. զստեփանոս միայնակեացն և զծնաւղսն իւր զմկրտիչ և զխուանդ. և զանանունքն և զանամաքն. և զամենայն երախտաւորքն իւր. խորանակից արասցէ սրբոց վկայիցն. և զուրախարար ձայնն արձակելով առ նոսա. եթէ եկայք բարի և հաւատարիմ ծառայք մտէք յուրախութ՝ ի ա՝ն ձերում։ Գարձեալ և մեղապարտ կարապետ գծագրող. զաղէտս տարակուսանաց իմոց առաջի մատուցեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր սիրելիք և հաւատարիմ ծառայք ք՝ի. հաքք և եղբարքք. սիրով հոգոյն. անեղկմիտ հաւատով, լիակատար որդեւ. բարեխաւսս լեզուաւ. առաջի ք՝ի ի ժամ աղաւթից ձերոց յիշեսջիք զիմ անարժանութ՝ իս և լերուք յա-

ամէնից կարե։ . . . . . .
. . . . . և ծովագեալ մեղաց իմոց մաքրումն
արասցէ։ և երկնից խորանաց մտիցն արժանացուսցէ քան իւ-
րում ողորմութեանն։ Նաև զծնաւղքն իմ զմկրտիչ քո։ և
զթանկ խաչեանն։ և զեղբարքն։ զզաքարիայ որ զբեղոյն աւգ-
նեաց և ծաղկեաց։ և զյովանէս որ աշխատեցաւ ի կոկել
թղթիս։ և չկարացի։ և զբեռին իմ զպարքնլոս։ որ յայսմ ամի
փոխեցաւ ի քո։ և զամենայն արեան մերձաւորքն իմ զկենդա-
նիք և զմնջեցեալք։ Եւ զուուցիչն մեր զկարապետ կրաւնա-
ւորն հաւրեղբայր մեր։ և զայնոսիկ որք երախտաւորք եղեն մեզ
ի պէտս մարմնաւոր պիտոյից։ Եւ զկենդանիցն իմ զդուռամեղիք։

Եւ ինքն քո ա՛ծ որ ա՛ր է փառաց։ և տուող ողոր-
մութ՛ե։ շնորհեսցէ զիսաղաղութ՛ի և զողորմութ՛ի ի իւր ա՛մ
աշխարհի։ տացէ աշխարհակալաց սկիզբ քաղցրութ՛ե և ի վերայ
ամենայն քրիստոնէից։ եկեղեցեաց զանշարժ զհաստատու-
թիւն։ . . . . . .
. . . . . վարդապետաց ա-
ջիութ՛ի։ կրաւնաւորաց վարս առաքինութ՛ե։ քահանայից
ուղղութ՛ի։ Թագաւորաց հաւատացելոց յաղթութ՛ի ընդդէմ
թշնամեաց խաչին քո՛ի։ իշխանաց հանդարտութ՛ի։ տանց շի-
նութիւն։ տղայոց պահպանութ՛ի։ արանց և կանանց աւրի-
նաւորութ՛ի։ ճանապարհորդելոց որք ի ծովու և ի ցամաքի
դարձ խաղաղութ՛ը։ ըուսոց և անկոց և սերմանց անվնաս ա-
ճումն շահեկանութեան։ աւդոց քաղցրութ՛ի։ անձրևաց առա-
տութ՛ի ըստ պատշաճի։ անասանց անսխալ ծննդակիանութ՛ի։
մեղաւորաց դարձ ապաշխարութեան։ համաւրէն հաւատա-
ցեալ ննջեցելոցն մեզաց թողութ՛ի։ հանգիստ և ողորմու-
թ՛ի։ Եւ յամենայնի գոհացողական վարուցութ՛ի մատու-
ցանել հաւրն երկնաւորի։ և որդոյն միածնի։ և ո՛ր հոգւոյն
ճշմարտի, այժմ և հանապազ և յաւիտեանս յաւիտենից։
ամէն։ . . . . . պատուական քահանայքն որ
են ի գեաւղն գաւառս։ զ...ոհանէս վիլիսոփայն որ է նա որդի
մեծ քահանային Թադէոսի։ և զերկու թումայն։ և զերկու
ատեփանոսն։ և զմարտիրոսն և զԳրիգորն։ և ժամահարն։ և
զկիրակոսն։ զի վայելելով զկիրքս ուրախասցին սովաւ և յի-
շեսցեն յաղաւթս իւրեանց զատացողն և զգրողն և զաշխա-
տողն։ Եւ զտանուտէրքն զմեծ և զփոքր։ և զհաւատարիմ տան-
տէրնայքն, զայր և զկին զծեր և զտղայ։ պահեսցէ քո՛ ա՛ծ
ի խաղաղութ՛ի։ և արժանի արասցէ արքայութ՛ե իւրում։
և նմա փառք յաւիտեանս։ ամէն։ յիշեցէք ի քո՛ զյովանէս
սան իւր և զայլ սաներն և ա՛ծ զձեզ յիշէ։

530ք Եւ յովանէս։ յաբեղէս։ ձաղխեցի։ տնականս։։՝ • • աբին։ Էվատին։ • • • • • • • • (ջնջած) մաւ-տաք։ Այլալուսն չքեցի։ հալալ ընչից եւրոց։ տվիւք պարտն մարհաբին։։• Վկ՞ութ՞ըդ։ տ՞ը մէլիքսէդին։ վկ՞ուք՞դ։։ տ՞ը յակոբին ու եդ։

շարունակելի **Մ. վ. Մաքսուդեան**

ԲԵԼԳԻԱՑՈՒՄ ԵՒ ՀՈԼԼԱՆԴԻԱՑՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շարունակութիւն

Հաագայի կենդրոնն է կազմում «Plein» կոչուող հրապարակն։ Այստեղ են գտնւում բոլոր յայտնի պետական շինութիւններն (Արդարադատութեան պալատը, գաղութների և զինուորական նախարարութիւնների շինութիւնները և մի շարք յայտնի հաստատութիւններ ու արձաններ)։ Հրապարակի արևմտեան կողմում գտնւում է Հաագայի նկարների աշխարհահռչակ թանգարանը (Museum konik lijk Kabinet Van Schilderijen)» Այս փոքրիկ թանգարանը շատ յայտնի նկարներ է պարունակում իւր մէջ։ Միջին նկարները պատկանում են մեծ մասամբ հոլանդական դպրոցին, կան և ֆլամանդական գերմանական, ֆրանսիական, իտալական նկարներ։ Այստեղ են գտնւում Ռեմբրանդի, Վան-դիկի, ծորդանի, Ռուբէնսի նկարներից շատերը։ Թանգարանի գարդն է կազմում Ռեմբրանդի «Անատոմիական դաս» կոչուող նկարը։ Շատ գեղեցիկ է և Պաուլուս Փոտերի «Զահել Ցուլը» կոչուող նկարն, որը Հոլլանդիայում ամենաժողովրդականացած նկարն է։ Թանգարանը շատ աչքի է ընկնում մարդկային նկարներով, մանաւանդ Վան-դիկի վրձինին պատկանողներով։

Թանգարանից քիչ հեռու գտնւում են հոլլանդական բոլոր նախարարութիւնները։ Շինութիւնները ապիւսից են և խղճալի տպաւորութիւն են թողնում։ Այս բացատրւում է նրանով, որ նախ՝ քարն է պակասում, երկրորդ՝ հողը պինդ չէ, թոյլ չէ տալիս մեծ ու փառահեղ շինութիւններ կառուցանել։